Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

**Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով**

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

ԱԼԷՔՍԱՆԴՐ ԱԲԷԼԵԱՆ

# ՄԿԻՃԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ

*Պիէս 1 գործ.*

*II ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ.*

891.99
Q-13

ԲԱԳՈՒ
Տպարան „Արօր"
1903

ԱԼԷՔՍԱՆԴՐ ԱԲԷԼԵԱՆ

# ՄԿՐՏԻՉ ՀԱՐՍՆԱՆԻՔԸ

II ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ.

ԲԱԳՈՒ
Տպարան „Արօր"
1903

891.99
Ա-13
800
ՉՉ-ԱԲ
18 NOV 2011
Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
37218-41

- .01. 2013

16673

1523

Дозволено Ценсур. Тифлисъ, 3 Сентября 1903 г.

## ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ԱԲՐԱՀԱՄ ԱՊԵՐ — հարուստ վաճառական։

ԽՕՋԱ ԱՐՁՈՒՄԱՆ — գեղական։

ԱՆԹԱՌԱՄ — նրա կինը, տներումբանող։

ՄԿԻՃ — Աբրահամի ծառան։

Ծանօթութիւն։ (’) չեշտ նշանը կրող ձայնաւորը
պէտք է հնչել մեղմ։

*Բեմը ներկայացնում է կէսասիական կէսեւրոպական ճաշակով դահլիճ: Մէջտեղ, աջ և ձախ դռներ:*

---

## ՏԵՍԻԼ 1.

## ԱԲՐԱՀԱՄ ԵՒ ՄԿԻՃ

**Աբրահամ**

*Տեսնում ես, Մկիճ, առանց կնկայ տունը ինչ դժոխքի է նման: Պատերը ինձ ուտում են: Ես ասացի բարեկենդան է, Զուշանը այսօր կ'փոշմանի յետ կ'գայ տուն, բայց չէ, սխալվում եմ: Էհ շատ էլ հոգս չեմ անիլ: Գնամ մի լաւ ձուկ առնեմ բերեմ, խորովիլ ուտեմ՝ կարմիր գինին խմեմ, վնաս չունի, թող այս մէկ բարեկենդաններս էլ այսպէս անցնի: Այստեղ լինես: (Գնում է միջի դռնով):*

**Մկիճ**

*Խնճ ապէր: Ղուշըտ*[1] *ղմֆամն*[2] *փախալ ա, մնացալ էս էրվիլով: Ինձ հարցունէս,*

---

[1] Թռչունդ. [2] վանդակից.

մէղայ Աստու, ուզումամ ասամ լավ[1] անէղն ա։ Մարթս պէտկանամ պա́նի լա́ւ ֆիքիր[2] անի։ Ալչան[3] լա́ւ պտուղ ա, համա դէ[4] նրա չըհասածը այնա[5] մին ղա́հըմար[6]։ Ի՛ւրիւչ պա́ն ա́ նրա հասածը. որ տխնիմէս էրկու աղուխտ[7] արանքըմը հուպտամ, չըախկոցը գէօզն ա́[8] պա́ցըրանըմ։ Տի՛ւ ապէրս. ասա ինքիտ մէծ հօրս եաշըմը[9], քինա́ցա́լ էս մին կնիգ էս առալ քի ոտը հա́լա́ հէրու չէ մէկալ տարի փայիզին[10] տասնուլթումը տիրա́ւ։ Իլիր Մկիճի պէս։ Ինքիս քսանօխտ տարեկան, ախչիգ ա́մ սիրա́լ երեսնօխտ տարական։ Դէ ուզորթ ա, էքուցվան օրը ա́նա́նց[11] կնիգի ա́թա́նց[12] (*Իրան ցոյց տալով*) տղին կ'թողնի, քու ճիչա́նիտ պէս հէրանց տուն կը փախչի։ Հա́ր[13] պա́նիս ա́լ ա́թա́նց ա́։ Մտկով, խէլքով, խիալուլթունով[14], ջուվալլաղուլթունով[15]։ (*Տխրելով*)։ Ո՜ւֆ. պէրանս հախ ա[16] ուրախ ա խօսըմ, համա[17] սըրտըս մըրկըտամ ա։ Քու հօր տունիգի բարբաղ[18] իլի սէ՞ր։ Տիւիգիլթ[19] մին ա́լա́մա́թ[20] ցաւ էս։ Քեզի տեսնամ քի ղա́րղա́մահ[21] իլէս. սատկէս, ամկէս, չօրանաս, տիղ իլէս կըպչէս դուվարան[22], ա́լ

[1]բոլորովին. [2]մտածմունք. [3]Աշորը. [4]բայց դէ. [5]խակական. [6]թոյն. [7]աղօրիք առամից. [8]երկինք է. [9]հասակումը. [10]աշնանը. [11] [12]այսպէս այնպէս. [13]ամէն. [14]խորամանգութեամբ. [15]չարամտութեամբ. [16]թէև: [17]բայց. [18]աւերակ. [19]դուինգ. [20]գերբնական. [21]ցաւաման. [22]պատից.



պուք չի կա́ս։ Ա՛չի[1] ա́ջա́ր[2] խաթի[3] չընգա́նք։ Տրանա առաջ ես ի սիրահարվողնէրի վէրա́ ծըծաղըմ, հիմիգ քի ինձ ա́մ միտիգ անըմ, լավ ծէր արև, ծըծաղ քի չէ, խէխչս ա կա́մ ինձ, խէխչս։ Ախր Մկիճը հո՞վ, սէրը հո՞վ։ Մկիճը հօրդէ՞, Անթառանը հօրդէ՞։ Տես պա́նի հօրդէ ա հասալ, քի Անթառանիս վէրա́ չարադըրանք ա́մ կիրա́լ։

## ՏԵՍԻԼ 2.

## ՄԿԻՃ ԵՒ ԱՆԹԱՌԱՄ

**Անթառամ**

(*Միջի դռնով ներս գալով*)։ Բարի երեկոյ տեսանք այ Մկիճ։

**Մկիճ**

Պարիւգփն, Աստու պարին։ (*Կողմ*)։ Ուրախթունաս սըրտըս պլտոց տուրաւ։ Խէր[4] իլի, այ Անթառան։ Ա՛ս ժամաժամքին ա́լի հի՞նչ կայ։

**Անթառամ**

Ուրախութիւն է. աչքդ լոյս։ (*Ծիծաղում է*)։

**Մկիճ**

Լսող Աստուծը քէզիգին լիսով պահի. Ծըծաղըմէս։

[1]այ մարդ. [2]լաւ. [3]դժբախտութեան. [4]Բարի.

**Աճրառամ**

Բարիկենդան է, ուրախ եմ։

**Մկիճ**

Աստոծ քեզի պարի կէնթան պահի։

**Աճրառամ**

Ալէրը տանն է՞։

**Մկիճ**

Քինացյալ ա ծիւղն առնի։ Հարմա[1] կիկա[1]։ *(Պաուզա)*։ Անթառան։

**Աճրառամ**

Հըը՞։

**Մկիճ**

Ախր ես սպասիլան մէռայ։

**Աճրառամ**

Ուհ։ Ե՞րբ ենք պրծնելու քո ձեռքիցդ։

**Մկիճ**

Մի տանջիլ, խէխճ ամ, մէխկ ամ, տիվէր Աստոծ կայ։

**Աճրառամ**

Էհ, չեմ իմանում դու էլ խելքդ ինչ ես տանել տուել։

1—1Հօրէս կգայ.



**Մկիճ**

Խա՛չ իմ ցէքիս չի։ Ինձանա իլի չամմանըմ[1] քի հինչ կանամ։ *(Անթառամ ծիծաղում է)*։ Մի ծըծաղիլ։ Տա սէր ա. տտ զարաֆաթ[2] չի։ Սիրոդը խէլքն ալ տանիլ կտայ, իւրան ալ։ Տէս ալ պանի Աստոծ հօրդէ[3] ա հասացուրալ քի, մօտիտ իրէսիս աբուռը[4] մըռացըլամ։ Ա՛լ մէռուն, ամօթ, հարկ չի մնացալ ինձ էտի[5]։

**Աճրառամ**

Ես չեմ իմանում դու ինձանում ինչ ես գտել։ Հազարներով տներում աղջիկներ կան պառաւած, քո աչքդ հէնց ինձ է տեսել։ Փառք Աստծոյ, փեսացուն ցերեկը ճրագով են փընտռում հօ։

**Մկիճ**

Ես ալ քեզ ամ ճրաքով չուռ[6] կամ ալի[7]։ Իլան տեղով մին ոսկի, որ իմ սէրս քեզիգին ա ճօկալ։ Հինչ անամ։

**Աճրառամ**

Տեսնող խօսողները ինչ կասեն։

[1]Չեմ իմանում. [2]կատակ. [3]որտեղ է. [4]ամօթը. [5]համար. [6]ման. [7]էլի.

**Մկիճ**

*Առաչինի պմնի թաքուն կլօխ կ՛պէրանք։ Երկուինջինի[1] քի Ասսանայ թաքուն չի, քմնդիմն[2] մմ վախիլիւ։ Ասըմ ա չախկալդան[3] բօյիւզ[4] ասլան[5] վար[6]։*

**Աճրառամ**

*Իմանում ես որ մարդիս լեզուն չար է լինում և շատ անգամ թացն էլ չորի կրակով է էրվում, Մկիճ։*

**Մկիճ**

*Հարկս հարկաց, պատիւս արժանաւորաց։ Հասկանըմ ամ մըտկըտ։ Լափ ալխէյին[7] իլի քի, նայ ալ իմ ցէքիս։ (Դաուզա). Անթառմն։*

**Աճրառամ**

*Ի՞նչ կայ։*

**Մկիճ**

*Ախր քէզ հէտի[8] մին չարադըրանք ամ կիրմլ։*

**Աճրառամ**

*Հիմի ամէն մի ծառայ էլ չարադրող է*

[1]երկրորդ. [2]մարդկանցից. [3] [4] [5] [6]աղուէսից մեծ առիւծ կայ. [7]միամիտ. [8]քեզ համար.



*դարձել։ Եթէ դու էլ Մալախիասենց ծառայի նման ես գրել, թող մնայ։*

**Մկիճ**

*Նա հինչի՞ վէրայ ա կիրմլ։*

**Աճրառամ**

*Սխտորի։*

**Մկիճ**

*(Ծիծաղից թուլանալով)։ Բա քու ասնիգիդ Աստոծ չինի, Անթառան աղջիկ։ Աքա[1] քմս սխտորի մասին մլ պմն կիկիրմն։ Հա, հա, հա։ Իմիգի[2] մին մլմմմթ պմնմյմ՜*

**Աճրառամ**

*Դէ մին կարդա տեսնենք։*

**Մկիճ**

*Նայ ալ իմ ցէքիս։ (Ձեռքերն ու քիթը սրբելով գրպանից հանում է մի թուղթ)։ Անգոջ[3] տիր աէս հինչ սըրտի կանձ խօսկեր ա։ (Սկսում է կարդալ)։*

*«Մաղէրդ սև հիւլօր հիւլօր[4],*
*«Պռօշնէրտ կըլօր կըլօր։*

[1]«Աքայ» բառի կրճատած, աղջիկ. [2]ընքշացրած «իմ» բառը, իմիկ. [3]Ականջ. [4]ոլոր.

«Ժամի տուռնան[1] լէն ուսերիտ,
«Մատաղ արա, մօ[2] Մկիճիտ։
«Անթառանս հաւ կ'խաշի,
«Հորի մէչան ճիւր կքաշի։
«Հասա կռները սըրտ կմաշի,
«Մատաղ կանի մօ Մկիճին։
«Տափը սիպտակ նախշ ունքերիտ.
«Չէկ մազերով խիլունք կխիտ.
«Տեղին խունկն երգան[3] վիզիտ,
«Թող փթաթվի մօ Մկիճիտ։
«Ճակատա ա ոսկի հէյլի[4],
«Ես Մէժլում ամ, տիւ մին Լէյլի[5],
«Որ քէզ հազար սիրող իլի,
«Ցէքա մէկնիր մօ Մկիճիտ։
«Ես ծէր բախչին[6] բաղ[7] ամ սըրմ։
«Եկ քաշանք դամաղ ամ սըրմ,
«Ջեարգմրի պէս հաղ[8] ամ սըրմ.
«Ցէք մի քցիլ մօ Մկիճիտ։
«Մ'ասիլ Մկիճ ունքտ ծուռ ա,
«Տիւ եկ սրտիս միտիգ արա.
«Աստուծ կանչէիր աղօթք արա,
«Արժանանաս մօ Մկիճիտ։
Հինչպէ՞ս էր։

[1]դռնից. [2]այս. [3]երկար. [4]հայելի. [5]պարսկական «Լէյլի Մէժլում» պօեմայի հերոսներ. [6]պարտէզին. [7]այգի. [8]երգ.



**Անթառամ**

Լաւ էր։ Բայց մի տեղ մազերիս սև ես ասում, միւս տեղ չէկ։

**Մկիճ**

Ձատ ալ խ ր թ ի ն ի ն չան քինալ։ Սէրան[1] քոռացած մարթը սև սիպտակ կ'կարի[2] ճօկիլ։ Ծան[3] ալ տիրակլամ։ Ուզումէս մին գիմգիմ[4] անամ։

**Անթառամ**

Բարիկենդան է, լաւ կ'լինի։ Երգիր մին ուրախանանք։ (*Ծիծաղում է*)։

**Մկիճ**

«Ճակատա ա ոսկի հէյլի, ես մին Մէժլում, տիւ մին Լէյլի. . .» (*Լսում է Աբրահամի հազողի ձայնը*)։

**Անթառամ**

Վայ ապէրը եկաւ։

## ՏԵՍԻԼ 3.

## ՄԿԻՃ ԱՆԹԱՌԱՄ ԵՒ ԱԲՐԱՀԱՄ

(*Մտնում է միջի դռնից*)։

**Աբրահամ**

(*Ձուկը ձեռին*)։ Զայնդ անսպառ, այ ուստայ[5] Մկիճ, ձայնդ անսպառ։

[1]սիրուց. [2]կարող է. [3]ձայն, եղանակ. [4]հանգարտ երգել, նուագել, զուարճանալ. [5]վարպետ.

**Մկիճ**

(*Կողմ*)։ *Իսաէ ան ասալ քի «[1]սօհբմթին չիբին վախտընդա, մօլթանի գմլդի քի Ալլա սախլասուն»[1]։ Ներողութիւն ապէր։*

**Աբրահամ**

*Բան չունես։ Անթառամ, բարի լինի, ի՞նչ կայ։*

**Աճրառամ**

*Մարտիրոս ապերը խնդրեց շնորհ բերէք իրանց մօտ։*

**Աբրահամ**

*Ի՞նչ կայ.*

**Աճրառամ**

*Ոչինչ. բարիկենդան է, այնտեղ պաս բռնելու։*

**Աբրահամ**

(*Ուրախ*) *Ուրեմն կնիկս էլ այնտե՞ղ է լինելու։*

**Աճրառամ**

*Դէ որ իմացաք էլ ինչ ասեմ։*

**Աբրահամ**

*Դէ սա մի փոքր շուտ ասա՛ էլի։ Այդ լուրիդ*

[1]Առակ ‹Խօսակցութեան քաղցր ժամանակ, մօլթանին մտաւ թէ բարի լոյս››։



*պատասխանը մին աչքալուսի էլ ես քեզ ասեմ։ Քո էլ աչքդ լոյս, մարդդ եկել է։*

**Մկիճ**

(*Ծրագը վառելով և տեղափոխելով*)։ *Պարիւ-գլին ապերիս։*

**Աբրահամ**

*Աստծոյ բարին։ Տես այս ձուկը ինչպէսն է։*

**Մկիճ**

(*Հոտ անելով*)։ *Փա՛հ. չատ ղանազանն ա։*

**Աբրահամ**

*Դէ, Մկիճ. այդ լաւ եղաւ կտանենք Մարտիրոսանց տուն, այնտեղ կուտենք։ Ուրեմն այդպէս, պասը այնտեղ կբռնենք, մեր տան կ'բացենք։* (*Մկիճ ձուկը տանում է դնում մի կողմ*)։ *Ա Մկի՛ճ. հէնց իմանաս մի քիչ կաղում ես։*

**Մկիճ**

*Հրամերէս ապէր. ոտս բիւդիւրմիշ ա՛[1] իլա՛լ։*

**Աբրահամ**

*Խօսքը ժամանակին կգայ։ Անցեալ տարի բարիկենդանին չէ՞ր որ կարծեմ էլի մի այդպիսի բան պատահեց քեզ։*

[1]Սայթաքել.

**Մկիճ**

Հա սալդաթի[1] կուճվը՞[1]:

**Աբրահամ**

Ի՞նչ կռիւ:

**Մկիճ**

Բօնդուրի[2] կուճվը:

**Աբրահամ**

Հա. պատմէը տեսնենք նա ինչպէս բան էր:

**Մկիճ**

Նայ ալ իմ ցէքիս: Ուռուսը տմսմն[3] էր կմմ, Թուրքը տմնմն[3]: Մեք ալ մէր դուվարի[4] տակին Թամաշա ինք[5] անըմ: Թուրքը քի շատացաւ, զօռ առաւ, ուռուսը փախաւ: Ուռուսը փախաւ, մեք խառնւեցինք: Մին Թուրքի կնիգ վերմս եկաւ, ես իգինքիս[6] եա քաշեցի, Թուրքի կնիգի մօտեցաւ:

**Աբրահամ**

Տեսնումես, Անթառամ, ինչ տեսակ կնիկարմատ է եղել:

**Մկիճ**

Ջալըմ[7] կնիկ էր: Համամչի[8] Խանըմը նրա

---

[2]—[3] 1881 Թւի յայտնի Թուրք և ռուս ամբոխի կուին. [2]տակառագործի. [3]—[3]այս կողմից այն կողմից. [4]պատի. [5]հանդիսատես էինք. [6]անձս. [7]քաջ. [8]բաղնիպան.



ՀՍԽՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922

մօտին, մուկնի հմքի: Մօտացաւ դեօշխս[1] տախտագին մին լափաշկայ[2]: Մէշկըս[3] տուրի դուվարին ստս պմըցըացուրի քի Թմփիգով[4] փորին կուպցունամ, ստս փռնեց: Ոաս փռնեց, հինչ փռնեց: Քաշեց քաշեց, մին խէյլմգ[5] տէղ տարաւ. ես ալ մն մին ոտիս վէրմ տընգլի[6] տալով տընգըլի տալով—քինմմմ: Բիրդմն[7] ստս պմըցըացըուց կպցրուց յափ քիթիս: Բիրդմն քի քուռուշ չ'տուրաւ, ինքի փախաւ, ես տունդուռուղիս[8] վէրմ կպայ տափին:

**Անրառամ**

(*Սապտիկ ծիծաղելով*): Ի՞նչ աներեսն է եղել:

**Աբրահամ**

(*Նոյնպէս ծիծաղելով*): Ցետո՞յ, յետո՞յ:

**Մկիճ**

Կոխքս հախս[9] կտրվէց, համա[10] վեր կացմյ տրա բամադմն[11] մին սալբանդ[12]: Չումուշկը Թողացաւ փախաւ: Ես չումուշկը վէ կալայ, մին սալդաթ փռնեց բողաղաս[13]:

**Աբրահամ**

Նա՞ ինչո՞ւ:

---

[1]կրծքիս. [2]ափսակ. [3]մէջքս. [4]քացիով. [5]բաւականի. [6]միստի վրա ոստոստելով. [7]յանկարծ. [8]ետեւիս. [9]Թէև. [10]բայց. [11]ետևից. [12]սալ. [13]շնչափողիցս.

**Մկիճ**

Ես էլ հա՛նց նայ ամ ասըմ քի, ա՛գա՛նամ[1] Թուրքի գլուխ ա՛մ[2], ա՛ն կնիգի ինձի հինչի չիքա՛ստ[3] արաւ. ա՛գա՛նամ ուռուսի գլուխ ա՛մ, ա՛ս սալդաթը ինձի հինչի՞ ա խէխտըմ։ Հա՛րնա՛խսա՛[4], ա՛ն օրան տա՛սնա՛ կոխկս ա՛թա՛նց[5] գի՛ւգի՛ւրդ[6] մնաց։ Ապէր ա՛ս կնիկարմատին հեռացրո՛ւ, սեկրէտ ունամ։

**Աբրահամ**

*(Անթառամին)*: Գնա՛ միւս սենեակ։ *(Անթառամ գնում է աջ դռնով)*: Ասա՛ տեսնեմ։

## ՏԵՍԻԼ 4.

## ԱԲՐԱՀԱՄ ԵՒ ՄԿԻՃ

**Մկիճ**

Ապեր, աւետարանան կլօխտ լա՛՞ւ ա՛ տիւս կա՛մ։

**Աբրահամ**

Աւետարանը այնպէս գիտեմ որ եթէ մին մախաթ էս երեսից անց կացնես մինչ միւս երեսը, ես կիմանամ թէ Մատթէոսի որ գըլխով է անցել, Մարկոսի որ անով. Ղուկասի

[1]Եթէ. [2]կողմ եմ. [3]անգամալոյծ. [4]ինչև է. [5]այսպէս. [6]զրկված.



որ տառով։ Ապա դու ինչպէ՞ս էիր ճանաչել ապերիդ։

**Մկիճ**

Բա՛լլյա՛[1]։

**Աբրահամ**

Բայց դու փորացաւդ չասացիր։

**Մկիճ**

Չիմ ա՛լ[2] մեղաւոր մահկանացու անք։

**Աբրահամ**

Սա խելօք խօսք էր։

**Մկիճ**

Ապեր, իմ ցաւս մին ա՛լա՛մա՛թ ցաւ ա։ Համ քաղցր ա, համ տա՛ռը։ Իմ ցաւս, ապեր, մին ա՛նա՛նց ցաւ ա քի. հինչքան իրիւչի չամ ասըմ հինչքան թաքուն ամ պահըմ, ա՛նքան հօքիս փառաորվըմա. սըրտըս ուռչում։ Հպարդանըմ ամ. կոռոզանըմ ամ. ա՛լ չամ ուզում քի մին ղանա[3] մարթի իրէս տէսնամ։ Բա՛գ[4] վախտ ալ ուզում ամ ինձ ծովը քցա՛մ խէխտամ։ Համա վախըմ ամ կա՛ն մէյիդիս[5] վըրա՛յ կաննան ոտով կուպցունան, ասան, տըրա բըլխին մտիգ արա՛, տայ ալ ուսում առածների ջա՛ր-

[1]Ինհարկէ [2]ամենքս էլ. [3]հատ. [4]երբեմն. [5]դիակիս.

գըն ա՛[1] ուղացալ ընգնի։ Վախըմ ամ ինձի անաղ անան։

**Աբրահամ**

Մկին. էնպէս բան խօսի, որ լսողն էլ ասի թէ սա բարիկենդանի խօսակցութիւն է։ Դու եկ ինձ քո փորացուդ ասա՛։

**Մկին**

Իրէսս չի կա՛մ։

**Աբրահամ**

Ասա՛. ասում եմ։ Ուրեմն ես քեզ համար ո՞վ եմ։

**Մկին**

Ապեր, ես ուզում ամ մի փիսաիկ գիժութիւն ալ ես անամ։ Ասսանայ թաքուն չի, քեղանայ հի՞նչ թաքուն։ Ուզում ամ անօրվամ։

**Աբրահամ**

Այ Աստուած չնորհաւոր անի, չատ էլ լա՛ւ էս միտք արել խեղճ ատէրտէրները մեռել թաղելուց ճաքեցին։ Բաս հարսնացո՞ւդ ով լինի։

**Մկին**

Ես իմ չափս չըմացողը չամ։ Իմ սիրա՛ծս Անթառանն ա։

[1]Շարքն է.



**Աբրահամ**

(*Փոթոկացնում է և իրան զսպում*)։ Ի՞նչ, ո՞վ։

**Մկին**

Իսկի մի ծըծաղիլ. տա սէր ա. տա զարաֆաթ[1] չի։

**Աբրահամ**

Ի՞նչ կ՚տաս ամեն բան իմ ձեռքովս գլուխ բերեմ, քեզ պսակեմ։

**Մկին**

Ախ ապէր. ոտերս ճիւր կանամ կ՚խմամ, մատերս ճրաք կանամ առաչիտ կ՚վառամ։ էշտ կիլա՛մ. հօրդէ ուզես, ինդէ կապի։ Համա վախս տայ ա քի[2] հարսնացուս սազլաս[3] չիլի։

**Աբրահամ**

Ես Աբրահամը չեմ, եթէ հէնց էս բոպէիս հարսնացուիդ չհամոզացնեմ և հէնց էս գիշեր չ՚պսակեմ քեզ։

**Մկին**

Ապէր, հարսանիքիս հինչքա՞ն միս կուտվի. մին փութ բոլա՞[4]։

**Աբրահամ**

Ի՞նչ ես ասում. որ չուտեն նա էլ չատ է։

[1]Կատակ. [2]որ. [3]համաձայն. [4]բաւական է.

**Մկիճ**

(Թիչ գնում է և յետ գալիս): Ախր մին պա՛նա՛մ փիքիր[1] անըմ:

**Աբրահամ**

Հը՞:

**Մկիճ**

Տիւ ասըմես «մին փութը ա՛գա՛նա՛մ չուտան, նայ ալ չատ ա». ախր ես վախըմ ամ ուտան, նա ալ քիչ իլի:

**Աբրահամ**

Դէ. ասած ղու, նա ալ իմ ձեռքիս:

**Մկիճ**

Ջան ապէր, ջան, ջան: Դէ մնացածը տա քեզ կասի: (*Թուղթը տալիս է Աբրահամին և գնում է ձախ*):

**Աբրահամ**

(*Կանչում է*): Անթառամ:

## ՏԵՍԻԼ 5.

## ԱԲՐԱՀԱՄ ԵՒ ԱՆԹԱՌԱՄ

(*Մտնում է աջ կողմից*):

**Աբրահամ**

(*Մի փոքր թղթին նայում է, ծիծաղում, և ցոյց տալիս Անթառամին*):

Այդ ինչ է:

[1] Մտածմունք.



**Անթառամ**

Ինչպէ՞ս է համարձակւել այդ անըրեսը...

**Աբրահամ**

Սպասիր. մին բան եմ խնդրելու: Այս գիշեր պէտք է Մկիճի հարսնացուն դառնաս:

**Անթառամ**

Ապեր ուզում ես ամբողջ քաղաքում ծաղրի առարկայ դառնա՞նք: Միթէ՞ մեղք չէ:

**Աբրահամ**

Ի՞նչ մեղք, չէ՞ որ Ղարիբի պանձումը ասված է «բարիկենդանի օրերումն էշ նստեցէք գաւակներումդ հարսեր նստացրէք սուտ սուտ հարսանիքներ արէք և ծիծաղեցէք»:

**Անթառամ**

Եթէ Աստծոյ ընդդէմ չէ, թող ձեր ասածը լինի:

**Աբրահամ**

Այ օրհնեալ լինես: Մկի՛ճ: (*Մկիճ ներսից: «Համմէ»*): Այնտեղ ինչ ես անում: (*Մկիճ ներսից «Ջուքվըմամ»*): Լաւ, այստեղ եկ. հարսնացուդ համաձայն է: (*Գնում է աջ դռնով*):

## ՏԵՍԻԼ 6.

## ՄԿԻՃ ԵՒ ԱՆԹԱՌԱՄ

**Անթառամ**

Չ՚պըրծանք ձեռքիցդ էլի։

**Մկիճ**

Վերջը փախուցեցի՛ր։

**Անթառամ**

Կլինես ալերի մատաղը։

**Մկիճ**

Իլա՛մ քու մատաղա։ Հիմի՞ ա՛լ չես թօղնիլիւ մօտանամ։

**Անթառամ**

Մինչև անթառամ պսակս չ՚լինի, մօտենալ չ՚կայ։

**Մկիճ**

Տիւիգիտ ինձ էտի հա՛նց Անթառան էս ալի։

**Անթառամ**

Չե՛մ սիրում քեզ. կողքդ ծուռ է։

**Մկիճ**

Գեներալ կայ ոտ չունի։



**Անթառամ**

Ասում են վախկոտ ես։

**Մկիճ**

Խա՛նչա՛լս[1] հա՛րա՛ն[2] աշխանըմը[3] չարփայիս[4] կլխան կախ արած։

**Անթառամ**

Ասում են պսակված ես։

**Մկիճ**

Հա հա հա։ Ասմ՛ ես մմմմ՛դակյան ամ իլա՛լ ինքիս պմ՛նա՝ բէյխա՛բա՛ր[5]։ Ես վախըմ ամ տիւ ինքիտ փսակված չիլէս։

**Անթառամ**

Ասում են ուզեցել ես մալական դառնաս.

**Մկիճ**

Կա՛րմիր կինիա՛ն ա՛մ քուշտացա՛լ. եօխսա[6] բօրշն ամ[7] սիրա՛՛լ։

**Անթառամ**

Ասում են խմող ես։

**Մկիճ**

Նա Քոռ Քեասպա՛րին տես։

---

[1] Դաշույնս. [2] անհա. [3] խոհանոցում. [4] մահճակալիս. [5] անտեղեակ [6] թէ. [7] ապուր.

**Անթառամ**

Ասում են թաղթ խաղացող ես։

**Մկիճ**

Մեղայ Աստու ա՛գանամ[1] քի փորձըրվածը[2] տանձանոցան[3] ճօկիլ կարամ։

**Անթառամ**

Ասում են գող ես։

**Մկիճ**

Նա գիժ—Բալասիին տէս։ Պրծա՛ր։

**Անթառամ**

Պրծայ. հիմայ տեսնում եմ որ ամենքն էլ զըպարտել են։

## ՏԵՍԻԼ 7.

## ՄԿԻՃ՝ ԱՆԹԱՌԱՄ ԵՒ ԱԲՐԱՀԱՄ

*(Աջ դռնով գալիս է)։*

**Աբրահամ**

Հը չ՚պրծա՞ք։

**Մկիճ**

Ապէր. յիմի ամ ըմացալ քի աս խեղճըմը մէխկ չ՚կայ։ Մեր փախըլ[4] հայերը պան չի մնացալ քի

[1]Եթէ. [2]փոսիկ. [3]տանձիկ խաղաթղթի անուններ. [4]Նախանձոտ.



վերաս չ՚սալըքան, քի ես ղումարբազ[1] ամ, պխանըսկայ ամ[2], կող ամ, տայ ամ, Նայ ամ։ Աղա տողի ալըտին գիւլլա[3] կպչի։ Ասողը առնը մընա[4], թարթափիլ[5] անի, գիւլլախըրրով[6] իլի, տեւաժարվի[7]։ Ասողի բաբան[8] կոնղըկծիկ[9] իլի։ Նրա օխտը պօրտը տուռնաց տուռնի հաց հաւաքի։ Ա՛գանամ դօղրուն[10] խօսող ա, կա իրէ-սիս ասի։

**Աբրահամ**

Լաւ, մի չարանալ Մկի՛ճ։

**Մկիճ**

Չէ դա, ապէր. մեք այ մին մարթի աղայ անք։ Դասաղ[11] ա կամ։ Մեք անք ղարափաթի[12] քիցիմ, ախր եաղօլլին[13] մին հիւշտի[14] ա բանդ, քի պանան պան տիւս պէրի։

**Աբրահամ**

Դէ լաւ գնա կանաչ կարմիրդ կապիր. *(Մկիճ գնում է ձախ դռնով)*։ *(Տալիս է բանալին Անթառամին)*։ Ա՛ռ կամօղի բանալին։ Դու էլ գնա զուգվիր թէ չէ բեղ չի սիրիլ։ *(Անթառամ գնում է աջ)*։

[1]Խաղամոլ. [2]արբեցող. [3]գնդակ. [4]արինում մնայ. [5]Թաթռայ. [6]գնտախորով. [7]գեաժարվի. [8]պապը. [9]կաթուածահար. [10]ճիշտ. [11]կոտրում եմ. [12]կատակի [13]տարորդին. [14]նշանի.

## ՏԵՍԻԼ 8.

## ԱԲՐԱՀԱՄ ՄԵՆԱԿ

**Աբրահամ**

(*Ձախ դռան մօտ*)։ Մկի՛ճ. մեր պապական օրէնքը ոտնատակ չանե՛ս, ձիք գտակս կ՚դնես։ (*Մկիճ ներսից. «Բաս իմ գայաբանդիս*[1] *քի էրկու մանէթ վեց շահիով ամ առալ»*)։ Մօղան ինձ գո՞ւ ես սովորցնելու։ Թուրս էլ կ՚բերես որ կընքահայրդ եմ լինելու։ Ի՞նչ կայ տնքում ես։ (*Մկիճ ներսից. «Ջա՛րմաներս*[2] *հուփ ա տամ»*։ Դէ չուտ արա՛։ Ես էլ գնամ հարսնացուիդ հագցնեմ։

## ՏԵՍԻԼ 9.

## ՄԿԻՃ ՄԵՆԱԿ

(*Մտնում է ձախ դռնով*)։

**Մկիճ**

(*Երկարաթև չուխայ, կանաչ կարմիր թաշկինակները խաչաձև կրծքին անցրած, մի ձեռին թուր, միւսումը փառած կիսատ մոմ։ Երկար կօշիկներով, մի չիթ երկար թաշկինակ գօտիից կախ, ձիք գտակով, թշերը կարմրացրած։*

Փառք Քեզ Տէր, փառք Քեզ։ Վէրջը հասանք մեր մուրազին[3]։ Ուղորմած հոգի մեծ

[1]Գարիբալդի գտակ. [3]կօշիկներս. [3]ուխտին.



մէրս կասէր «առօտս վեր կացար մին հրաժարամ տամ»։ Ասօր առիլիս, Անթառանս աչկիս մին լիսեց. ասեցի Տէր ողորմեա։ Հիմի հինչ կմրմնըրա՛լ ա թուշերս. լափ, չամախեցիի ասած, մում կ՚վառվի։ (*Ցածր ձայնով*)։ Խօսքը մեր մէչին, խանըմիս[1] քիրշանան[2] ամ կծղացալ։ Ասոււ պա՛նի ըմանալ չիլիլ։ Հօ՞վ էր ըմանըմ քի մ՚ս քիշէր իմ փըսակս պէտկ ա իլէր։ Համա Ասոտծ մնանց պէրմունք տըրաւ քի գիւշմաններս ըռէխը ճղեց։ Հիմի Անթառանը քի ինձ տեսնի մթանց չաչախուսոյին[3] կեցված, աչկին չի հաւատիլիլ։ Կպչիլիւ ա վիզաս պուք չի կալիւ։ Եարաբ Անթառանիս պէս ալ կնիկ կայ աշխարքըմըս, ջան ա ջան։ Հիմի զուռնիս ծանը լիսօղներր հարցնիլիւ ան քի «տա հի՞նչ ա։ տա հի՞նչ ա». քի հարսանիք. «Աղա տա հո՞ւմ հարսանիքն ա»։ Մկիճի։ «Աղա հի՞նչ Մկիճ» Աղա գիւմա՛շ Մկիճի։ Բա՛գա իմ անըմըս գիւմա՛շ[4] անիողը սարսաղ ա՞[5] իլա՛լ։

## ՏԵՍԻԼ 10.

## ՄԿԻՃ ԵՒ ԱՆԹԱՌԱՄ

(*Թասակրաւով աջ կողմից մտնելով և կեղծ արտասւելով*)։ Տա հիմիգվանան հի՞նչ գիլասներ[6] էս թափըմ։

[1]Տիկնոջս. [2]երեսի քսելու կարմիր ընդուր. [3]շքեղ հագուած. [4]գոմէշ. [5]յիմար [6]կեռաս.

**Անթառամ**

Ինձ համար պէտք է թանգագին շորեր առնես:

**Մկիճ**

Կառնամ հինչի՞ չամ առնիլ. կաննի մին մակարիա[1] քինամ:

**Անթառամ**

Ժամացոյց եմ ուզում, կռնի ոսկի եմ ուզում:

**Մկիճ**

Նա ալ իմ ցէքիս: Ամիսի հինգ մանէթը հո՞ւմ էտի ամ առնըմ:

**Անթառամ**

Ես փայտոնով եմ ման գալու:

**Մկիճ**

Սաղ[2] իլի Բախիչ դայխ[3]. հօ՞ր օրվան փայտօնչի[4] դայխ ա՛:

**Անթառամ**

Ակնոց եմ դնելու, հովհար եմ բռնելու:

---

[1]Մակարիի տօնավաճառ. [2]ողջ. [3]քեռի [4]կառապան.



**Մկիճ**

Ա՛ջա՛ր ա՛լ[1] կանես. լա՛ւ ա՛լ կ՚սազի:

**Անթառամ**

Երկար շլէյֆ[2] եմ կարել տալու, գլխարկ եմ դնելու:

**Մկիճ**

(*Կողմ*): Տրա պօզերն ա[3] ըլա՛լ, ես բէյխաբար[4]: Ա՛շի[5] քեզ բալ[6] ալ կ՚տանամ, հի՞նչ ֆիքիրի[7] էս: Համա Անթառան. տէրտէրի առաջին կարմրիլի՛ւ անք է:

## ՏԵՍԻԼ II.

## ՄԿԻՃ, ԱՆԹԱՌԱՄ ԵՒ ԽՕՋԱՅ ԱՐԶՈՒՄԱՆ

(*Միջի դռնով*):

**Խօջայ Արզուման**

Ընթառանը ըստէ՞ղ ա:

**Մկիճ**

Հի՞նչ «Ընթառան ա»:

**Խօջայ Արզուման**

Մըէր օղըրշաղը[8]:

---

[1]Կաւ էլ. [2]ծիք փեշեր. [3]եղջիւրներ, [4]անտեղեակ. [5]այ մարդ. [6]պարահանդէս. [7]մտածմունք. [8]ընտանիք.

**Մկին**

Հի՞նչ «օղլուշաղ ա»:

**Խօջայ Արզումանն**

Մըեր տնացին:

**Մկին**

Հի՞նչ «տնացի»:

**Խօջայ Արզումանն**

Մըեր խոխոց մ՛րը:

**Մկին**

«Խոխոց մ՛րը» հի՞նչ ա՛:

**Խօջայ Արզումանն**

Ըմբօ́. «էտ հի՞նչ ա՛, էն հի՞նչա՛» թ՛ա՛ վէ՞րն ա: իմ կնէկս ըմ օղըմ է՛, իմ կնէկս:

**Մկին**

Բ՛ա՛գա՛մ կնգանտ ղարօուլչին[1] ի՞նք:

**Խօջայ Արզումանն**

Պա դէ հի՞ն գիտա՛մ: Ասըմըն էն ա Ա՛պ-րա՛մ աղին քշտին:

**Մկին**

Բ՛ա՛ս մարիֆաթա[2] Աստոծ կալի: Հար-

[1] Պահապան. [2] քաղաքավարութիւնդ.



սանիքի տուն էս մտալ մին Աստոծ չնօըր ա-նիի տէղ, կնգանտ կռէվն էս բաշտամիշ[1] արալ:

**Խօջայ Արզումանն**

Ըմբօ, էտ հի՞նչ հարսանիքի սօհբա՛թ[2] ա՛. կնէկս ըմ օղում է, կնէկս: (*Անթառամ ձեռքով բե-րանը բռնելով, ուզում է Խօջայ Արզումանին հաս-կացնել թէ լռէ*): Ըմբօ́, ըմբօ́: էտ հու Ընթա-ռանն ա: Ախչի էտ խէ՞ մատըշկայ ըս[3] տա՛ռա՛լ:

**Մկին**

(*Ծիծաղում է*): Հա հա հա: Ա՛ս մարթըմը խաթա[4] կայ!...: Այ դըըըռ[5] չնական. տա իմ հարսնացուս ա քի:

**Խօջայ Արզումանն**

(*Սպառնական*): Է՜յ. ես իմ կնէկս ծէքա՛ս առնողին.....

**Անթառամ**

(*Ծիծաղում է*): Վայ սիրտս գնաց:

**Մկին**

(*Անթառամին*): Մի վախիլ, մատաղ իլա՛մ: Ապէ՞ր. ինդէան[6] մին թաս[7] ճիւր պէր նշանածս իւրա՛նա՛[8] քինա՛ց:

[1] Սկսել. [2] խօսակցութիւն. [3] տիկին. [4] գժբախտու-թիւն. [5] կոպիտ. [6] այն տեղից. [7] բաժակ. [8] իրանից.

## ՏԵՍԻԼ 12.

## ՄԿԻՃ, ԱՆԹԱՌԱՄ, ԽՕՋԱ ԱՐԶՈՒՄԱՆ ԵՒ ԱԲՐԱՀԱՄ

(Աջ դռնից):

**Անթառամ**

Այդ ինչ է պատահել: (*Նկատելով Խօջայ Արզումանին, մինչ Մկիծը Անթառամին փաղաքշում է, Աբրահամը համոզում է Խօջա Արզումանին որ նա լռէ*):

**Խօջա Արզուման**

Դա դէ տնաշէն խոլ ասի լհի: Բալիկենիթան ա վէչլինչ: Էտ հիւր°[1] տղայ ա: Ձաուշ Ռըստամին տղան չինի:

**Մկիճ**

Ես ամ: (*Թուրը տալիս է Աբրահամին, մոմը Անթառամին*):

**Խօջայ Արզուման**

Կիր օնիս: (*Գրպանից մի նամակ հանելով տալիս է Մկիծին*):

**Մկիճ**

(*Առնում է նամակը և նայում կնքին*): Փէչատը[2] աշկիս սև ա կամ խէր[3] իլի: (*Բացում է*

[1]Ո°ւմ. [2]Կնիքը. [3]Բարի.



*և կարդում*): «Գթառատ ախպայր իմ. Մկիճ ապերիտ քոյրական ողջուն»: Քիւրս ա կիրիմ. Կիրած կիրիտ մեռնամ ա Գիւլնազ (*Շարունակում է կարդալ*): «Զմռնշան աղաբաջիս[1] ճմրը[2] քէզ բախշեց»: Լիսայ ամ, ուղօրմի իւրան. լաւ ջան էր: (*Կարդում է*): «Մաման ասըմ ա լիսալ ամ. Մկիճը պապըոս ա քաշըմ. կիրի աշկներս լուսի. չհօօր իլի»: Ախ այ փախըլ[3] հայեր: Եանի տայ խաբար[4] տալի պանմ°: (*Կարդում է*): «Դաղաշն[5] ալ ութ ամիս է ռանահեղի[6] էր ընգալ. փորացաւան պարագալ էր չօփ կըտըրվալ: Մէք հալա հնգալ ինք. փող չ'կար: Անցկացած չապատ դաղաշը մէ մէ... մեռալ այ...»: (*Թուլացած նստում է լալիս*): Վայ դաղաշս վայ: Ախր ես հանց արագը տեսալ ի: Ախր հանց իմ սըրտըս մին ըշխին[7] էր տուրալ: Դաղաշս վայ, դաղաշս վայ: (*Թուղթը ձեռից ընկնում է*): Տալինը տասներկու ամիս ալա նրա տուռնըմը գիւլով միմք[8] պիժմնող դաղաշս վայ: Ասօրվան օրը տու պէտք ա մինիգ դանա[9] Մկիճիտ հարսանիքըն մակարնէրը կանչիլ: Հակառակի պէս իմ ուրախութունիս սուքըշիվան[10] խառնող դաղաշս վայ: Ես մս ղմըլե[11] տեղըմը ծեղ էտի

[1]Նոր հարս. [2]Կեանքը. [3]Նախանձոտ. [4]Լուր. [5]Հայրիկ. [6]Լուծել. [7]Նախազգացում. [8]Վարդաջուր. [9]Մի հատիկ. [10]Սուգու լաց. [11]Օտար.

ամ չալըշ[1] կամ։ Աչկիտ սև սիպտակ Մկիճիտ քեզ ղուրբա՜ն[2] իլի՜։ Ա՛ջար[3] ևթիմ[4] մնացինք այ Գիւլնազ քի՜ւրիգի՜ս։ Լացիտ լացիս խառնի՜ այ Անթառան, այ ապէր։ (Արզումանին)։ Այ քու ոտիգիտ կոտրվէր, ոչ ասօրվան օրը խաէ ոտ տինիր։ Տա հինչ սև արիր տիւ իմ կլխիս իմ հարսանիքիս։ Վայ վայ վայ, վայ վայ։ Վայ դադաշս վայ, վայ։ (Նամակը Աբրահամը վերցնում է և աչքից անցնում)։ Փորը մէշկան[5] կպած, երգան[6] բօյիդ[7], երգան բեգիտ, պլօզ պլօզ աչկերիդ Մկիչիտ մատաղ իլի դաղաշ։ Տարինի տասներկու ամիս մին թաս[8] մրմըլի կարօտ դաղաշս վա՜յ։ Ուֆ Ապէր։ Հո՞վ ա տեսալ քի կանանչ կարմիրըտ կապած, ջահիլ ջուվան[9] հարսնացուա կոխկիդ կաննած, տիւ հօրտ մէյիդին[10] օխշաթ միշ[11] անես։ Ու՜ֆ Ապէր. տա կաղեթ[12] քիցիլի պա՛ն ա։ Հի՞նչ ես կարթըմ։ Օրը հինչխիրխիգին[13] արա նրա ցէ-քին թագվող դաղաշս վա՜յ։ Ախ այ բալասըրտ դաղաշ, տիւմ մէնիլի վախթ բիթմա՞ր։ Ու՜ֆ ո՜ւֆ։ (Խօջայ Արզումանին)։ Իրէստ պա՜րզ. լա՛ւ նամակ պէրիր ինձ էտի, հիմի ա՛լ առաչիս տանձանոցի սալդաթի[14] մնան եկալ ես կաննա՛լ։ Վայ դաղաշս վա՜յ։

[1]Ջանք. [2]Մատաղ. [3]Լաւ. [4]Որբ. [5]Մէջքից. [6]Երկար. [7]Հասակիդ. [8]Բաժակ [9]Մատաղահաս. [10]Դիակին. [11]Սա-վացնել. [12]Լրագիր. [13]Մինչ երեկոյ. [14]Տանձիկի զին-ւոր խաղաթղթի.



**Աբրահամ**

(Մկիչին)։ Սուս արա տաւար, դու որ կարդալ չես կարողանում, էլ ինչ ես էչի նման գոռում, իմ տունս սուգի տուն շինում։

**Մկիճ**

(Դեռ լացակնած)։ Հի՞նչ ա կի՜րած։

**Աբրահամ**

Ջահրմար[1] է գրած. կարդա քառացած աչքերովդ. (Կարդում է ինքը)։ «Դագաշը մեռալ ա մէռալ»։ (Ցոյց տալով Մկիչին)։ Ցեսո՜յ, կարդա։

**Մկիճ**

(Կարդում է աչքերը սրբելով)։ «Մեռալ ա ա մեռալ, եդ ա եկալ»։ (Թռչում է տեղից կարդում է)։ «Հիմիկ փառք Աստծոյ բաղար է գնում»։ (Սաստիկ ամաչելով)։ Վա՜շշ։

**Խօջայ Արզումանն**

Ես ըըմացալ ըմ. ըտա իւրան ապօրն ար թաղըմ։ (Մկիչին)։ Ասա զուռնաչու տղայ, էտ հիբրի կիրըտ ըըհա՛[2] քու հա՛ր[3] ա տուվալ, էտ հիբրի մեռաւ։

[1]Թոյն. [2]Հէնց. [3]Հայր.

**Մկիճ**

Ա՛լ սուս արեցէք քի քիչ էր մնացալ բիաբուռ[1] իլինք. լմւ պըծանք: Ասսու պմնի իմանալ չիլիլ: Նա ուրախութիւնիս սուք խառնեց, որ նըրմն չ՚մոռանանք: (Ուրախացած): Ա՛չի նա ասալ ա մս նըրնգին Մկիճի հարսանիքի իլի, հմնց իլիլն մլ ա մլի:

**Աբրահամ**

Դէ ձուկը Խօջայ Արզումանը վերցնի և խաչեղբայր դառնայ: (Խօջայ Արզուման ձուկը վերցնում է միջի դռան ձախ կողմում կանգնում): Ես կնքահայրս էլ այստեղ կանգնեցի: (Կանգնում է աջ կողմում. Անթառամ մօմը տալիս է Մկիծին, կանգնում է մէջ տեղ): Ապա Մկիճ. մին էն կողմից ~~Ալան-Բալանի~~ նման, յարձակվիր հարսնացուիտ վրայ, առ գնանք: Դէ հա.

**Մկիճ**

Նայալ իմ ցէքիս: (Բէմի առաջի ձախ անկինից շտապում է միջի դռնով. Աբրահամ թուրը հանում է որ նրա գլխին դռան վրա պահի, Մկիծ սաստիկ վախենում է և յետ յետ գնում):

**Պ Ա Տ Կ Ե Ր:**

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
ИМЕНИ А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Հայաստանի Ազգային գրադարան
NL0420545

Կարելի է ստանալ իմ թարգմանած
Վիկտոր Հիւգոյի:

Կլօդ Գէօ . . . . . . , . . . 20 կ.
Մահապարտի վերջին օրը . . . . . 40 կ.

Իմ գրած փոքրիկներից:

Նաֆթի փանառ . . . . . . , . 20 կ.
Մկիճի ապահարզանը . . . . . . 20 կ.
Մկիճի հարսանիքը II-րդ տպագր. . . 20 կ.

Պատրաստ է տպագրութեան համար

«Մարւող ճրագներ» պիէս 3 գործողութիւնով:

Հասցէս՝ Բաքու Ալէքսանդր Աբէլեան:

16.673